«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ

EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

Դասընթաց- 2022

Հետազոտականաշխատանք

Թեմա՝ ՈՒսուցման մեթոդներն ու մոտեցումները, դրանց կիրառումը կերպարվեստի դասաժամին

Հետազոտող ուսուցիչ՝ Խաչատրյան Անահիտ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Մանկավարժական միտքը հին Հունաստանում----------4

Կրտսեր տարիքի երեխաների ուսուցում----------5

ՈՒսուցման մեթոդները----------6

Ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական

գործունեությունը զարգացնող մեթոդներ----------8

Պասիվ ,ակտիվ ,ինտերակտիվ ուսուցման մեթոդներ----------9

Ինտերակտիվ դասի արդյունքները----------11

Կերպարվեստը հիմունքների հիմքն է----------11

Եզրակացություն----------16

Ներածություն

Ներկայիս կրթական համակարգում այլևս արդիական չէ ուսուցչակենտրոն դասավանդման մեթոդները, այն փոխակերպվել է աշակերտակենտրոն ուսուցման,որտեղ աշակերտը ոչ թե սերտում է դասը, այլ ակտիվ մասնակցություն է ունենում դասապրոցեսին և զարգանում է վերլուծական ու քննադատական միտքը: Ուսուցչի ակտիվությունը պետք է իր տեղը զիչի սովորողների ակտիվությանը,որի համար ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ այս նախաձեռնության իրականացման համար։ Այդ մեթոդը կոչվում է ինտերակտիվ, որը նշանակում է փոխներազդող, փոխներգործող: Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողների միջև, այլ հենց իրենց , ուսումնական նյութը սովորողների միջև: Որպեսզի աշակերտները մնայուն գիտելիքներ ունենան պետք է ուսուցանվող նյութը կրկնելու , ամրապնդելու , կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով:

Նպատակ

Ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառման շնորհիվ աշակերտներին ներգրավվել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիր լուծելու համար: Ուսումնասիրել դասավանդման մոտեցումներն ու մեթոդները, որոնց կիրառման արդյունքում ձեռք բերված գիտելիքների շնորհիվ, կիրառել հնարներ դասավանդման ընթացքը ավելի ակտիվ, մասնակցային դարձնելու համար: Խրախուսել վերլուծական քննադատական մտքի զարգացումը:

Խնդիր

Ինչպիսի՞ ժամանակակից մեթոդներ կիրառել, դասն ավելի ըմբռնելի և հիշելի դարձնելու համար: Նկարչական ո՞ր ոճը հիմնականում ուսուցանել սովորողներին՝ ակադեմիական թե ազատական

Մանկավարժական միտքը Հին Հունաստանում

Հին հույն փիլիսոփաները իրենց հրապարակային ելույթներում և աշխատություններում անդրադարձել են ուսուցման և դաստիարակության խնդիրներին: Իդեալիստ փիլիսոփա Սոկրատեսը ասում էր, որ դաստիարակության հիմքը ոչ թե բնության երևույթների ուսումնասիրությունն է, այլ ինքնաճանաչումը, բարոյական կատարելագործումը:Հրապարակախոս Սոկրատեսը իր հրապարակային ելույթներում իր ունկնդիրներին ոչ թե պատրաստի դրույթներ էր հրամցնում, այլ հարց- պատասխանի միջոցով ստիպում , որ ունկնդիրները իրենք գտնեն ճշմարտությունը: Զրույցի այս մեթոդը կոչվեց Սոկրատեսյան, որը հետագայում օգտագործվեց մանկավարժության մեջ: Իդեալիստ փիլիսափա Պլատոնը կտրուկ տարբերություն էր դնում իշխող դասի և ստորին դասի միջև: Նա արհամարում էր ֆիզիկական աշխատանքը և ասում ,որ ստրուկների երեխաները իրավունք չունեն կրթություն ստանան: Բայց Պլատոնը ասում էր նաև , որ դաստիարակությունը պետք է կազմակերպվի պետության կողմից և երեխան պետք է դաստիարակվի դրական օրինակի միջոցով: Արիստոտելը մարդու մեջ տարբերակում էր մարմինը և հոգին, որոնք գոյություն ունեն անանջատ ինչպես նյութն է ու ձևը:Արիստոտելը հոգին տեսնում է երեք տեսակների մեջ և ըստ դրա էլ համակարգում է դաստիարակությունը՝ ֆիզիկական , բարոյական և մտավոր:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Վեց տարեկան երեխանեի զարգացման տարբեր կողմերի հետազոտությունները ցույց են տվել, որ նրանք իրենց հանգիստ, հարմարավետ, ինքնավստահ են զգում մանկապարտեզի նախապատրաստական խմբերում ուսուցանման ժամանակ, ի տարբե ռություն դպրոցի առաջին դասարանի: Որովհետև այլ է մանկապարտեզի կենսառիթմը,երեխաները գտնվում են իրենց միջավայրում ,իրենց ծանոթ մարդկանց հետ: Իսկ ի՞նչ է տեղի ունենում երեխայի հետ, եթե նա, այնուամենայնիվ հայտնվում է դպրոցական նստարանին:Հետազոտությունները ցույց են տվել ,որ կարող է վատանալ երեխայի առողջական վիճակը, կարող է պակասել քաշը, արյան մեջ պակասել հեմոգլոբինի քանակը, ի հայտ են գալիս գլխացավեր, երեխաների որոշ

մասը գտնվում է հուզական վիճակում ,որի հետևանքով առաջանում է նևրոզներ:Բայց շատերի մոտ 1-2 ամիս անց լարվածությունն անցնում է, իսկ ոմանց մոտ դեռ երկար պահպանվում:Կրտսեր դպրոցական տարիքի աշակերտներին բնորոշ է անկայուն ուշադրությունը,տեսողական պատկերավոր- մտածողության գերակշռումը, բարձր շարժողական ակտիվությունը,ձգտումը դեպի խաղը ,ճանաչողական հետաքրքրությունների բազմազանությունը:Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է դարձնելու համար աշակերտը պետք է ներառվի ակտիվ գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Սովորողի ակտիվության զարգացման նպատակով կիրառվում է խրախուսման մեթոդը: Խրախուսման մեթոդը առաջինը կիրառելի է Կարաչին: Նա մրցանակ է շնորհել ակադեմիայի լավագույն ուսանողներին: Այս խրախուսումը ձգտում է առաջացրել մյուսների մոտ , որ իրենք ևս արժանի լինեն մրցանակի: Խրախուսման այս մեթոդը կիրառվում է նաև այսօր, լավ արդյունքի համար ստանում են բարձր գնահատական: Ըստ Մակարենկոյի աշակերտին հարկավոր է խրախուսել իրական հաջողության համար, որպեսզի չարժեզրկվի խրախուսման իրավիճակը: Բայց ուսուցիչը պետք է հաջողության իրավիճակներ ստեղծի, քանի որ ամեն երեխա չէ, որ կարողանում է ինքնուրույն հասնել այն մակարդակին, որը թույլ է տալիս նրան խրախուսել: Երեխային խրախուսելով՝ մենք պետք է դաստիարակենք ինքնակատարելագործման ցանկություն, այլ ոչ թե խրախուսման ակնկալիք:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մեթոդը հունարեն բառ է , որը նաշանակում է ուղի ,եղանակ:Մեթոդը ուսուցչի և աշակերտի միջև կարգավորված և փոխկապակցված կապն է, որի ժամանակ ուսուցիչը հաղորդում է գիտելիքներ, իսկ աշակերտը դրսևորում է իր գիտելիքները , հմտություններն ու կարողությունները: ՈՒսուցման մոտեցումները տարբեր են , օրինակ ակտիվ ուսուցումը , որտեղ ուսուցիչը ոչ թե մատուցում է պատրաստի գիտելիքներ ,որը աշակերտը պետք է մտապահի և վերարտադրի, այլև ուսուցման ընթացքում ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում

գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերումն է:Դպրոցական տարիքի երեխաները գիտելիքներ են ձեռք բերում շրջապատող իրականության առարկաների և երևույթների անմիջական ընկալումից և ուսուցչի ուղերձներից :Մանկավարժ-գիտնականները մեթոդները բաժանում են երեք խմբի՝

Տեսողական– էքսկուրսիա ,դիաֆիլմերի դիտում, դիդակտիկ նյութերի ցուցադրում:

Բանավոր – բացատրել, պատմել, զրուցել, բանավիճել,

Գործնական – տարբեր առարկաներից առաջադրված խնդիրների ,վարժությունների ,առաջադրանքների լուծում,կերպարվեստից ծեփակերտում պլաստիլինով, բացիկների պատրաստում , գունավոր թղթերից ապլիկացիաների և խճանկարների պատրաստում:

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը , հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ,իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց, աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները

միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը:Տեսողության օրգանները դեպի գլխուղեղ են թողնում հինգ անգամ ավելի շատ ինֆորմացիա քան լսողության կամ այլ օրգաններ :Ինֆորմացիան ,որ մարդու ուղեղ է հասնում տեսողության օրգանների միջոցով էական վերակոդավորում չի պահանջում, այն տպավորվում է մարդու հիշողության մեջ հեշտ ,արագ և ամուր:Ուսուցման պրակտիկայում ապացուցվել է ,որ նկարներով ցուցադրված առարկաները ավելի հեշտ են հիշվում ,քան գրավոր կամ բանավոր ասվածը: Երեխան մտածում է ձայներով, ձևերով , գույներով, զգացողություններով:Այստեղից էլ առաջանում է զննական ուսուցման անհրաժեշտությունը,որը կառուցվում է ոչ թե վերացական խոսքի այլ կոնկրետ կերպարների վրա:Բայց զննականությամբ չափազանց տարվելու դպքում, այն դառնում է արգելք գիտելիքների խորը յուրացման ճանապարհին: Խոչնդոտում է վերացական մտածողության զարգացմանը: Պետք չէ սահմանափակվել զննականությամբ,այն ոչ թե ուսուցման նպատակ է , այլ ուսուցման, մտածողության զարգացման միջոց: Երբ մարդը ինչ-որ բան կարդում է՝ հիշում է 10 %, երբ լսում է հիշում է 20%, երբ ինչ-որ բան տեսնում է ու լսում 50%,իսկ երբ ինչ –որ բան ինքնուրույն է կատարում 90%-ը:

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵՂ ՄԵԹՈԴՆԵՐ

Ստորև կներկայացնեմ ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը զարգացնող որոշ մեթոդներ: Այս խմբի մեթոդներն են ինդուկտիվ, դեդուկտիվ, պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական , հետազոտական մեթոդները:

Ինդուկտիվ մեթոդ-այս մեթոդի ժամանակ աշակերտը հասկանում է ուսումնասիրվող նյութի էությունը: Դա կատարվում է մասնավորից –ընդհանուրի գնացող ճանապարհով: Սկզբում յուրացնում են մասնավոր փաստերը ,առարկաների

միջև եղած կապերը , որից հետո կատարում են եզրահանգումներ:

Դեդուկտիվ մեթոդ-այս մեթոդի ժամանակ ուսուցիչը հայտնում է ընդհանուր խնդիրը, այնուհետև սկսում է դուրս բերել մասնավոր խնդիրները, բացահայտում նյութի բովանդակությունը, ընդհանուրից դեպի մասնավոր տանող ուղիով:

Բացատրական-ցուցադրական- մեթոդի ժամանակ ուսուցիչը բացատրում , ցուցադրում է պատրաստի դասը, իսկ աշակերտը մտապահում է:

Վերարտադրողական մեթոդը-կիրառելիս , ուսուցիչը մատուցում է ուսումնական նյութը, իսկ աշակերտը տանը սովորում է դասագրքում զետեղված դասը, կատարում տնային հանձնարարությունները և դպրոցում յուրացրած գիտելիքը վերարտադրում:

Պրոբլեմային շարադրանքի մեթոդը- կիրառելիս , ուսուցիչը ինքն է պրոբլեմ առաջադրում , այնուհետև լուծում, հաղթահարում պրոբլեմային իրավիճակը և աշակերտներին ցույց տալիս լուծման ճանապարհները: Իսկ աշակերտները դատողություններ են անում, կռահումներ, եզրահանգումներ անում և բանավիճում:

Էվրիստիկ մեթոդ- /հունարեն բառ է, որը նշանակում է բացահայտում, հայտնագործում եմ/ նպատակաուղղված է դասասենյակում աշխատանքի ցանկացած պահին անկախության դրսևորմանը, այսինքն ուսուցիչը երեխային հրավիրում է կատարել աշխատանքի մի մասը:Աշակերտն ինքն է որոնում , գտնում խնդրի լուծումը, հետևաբար ինքն էլ վերահսկում է լուծման ընթացքը:Խնդրի լուծումը ուղեկցվում է զրույցով, աշակերտը բացահայտումներ է անում դրա համար էլ կոչվում է էվրիստիկ:

Հետազոտական մեթոդի- ժամանակ ,աշակերտը լրիվ ինքնուրույն է և անկախ:Նա ուսումնասիրման ժամանակ կատարում է հետազոտություն, բացահայտումներ, պարզաբանում և նոր գիտելիքներ ձեռք բերում:

ՊԱՍԻՎ, ԱԿՏԻՎ, ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ



Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: ՈՒսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ և աշակերտը համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:

Ակտիվ մեթոդ



Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր զգայարանների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում:

Ինտերակտիվ մեթոդ



Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը ուղղորդում է աշակերտներին, նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարությամբ:

ՈՒսուցչի ֆունկցիաներն են՝

1. Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:

5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ: ՈՒսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է : Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության միակ աղբյուր, նա միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բոլոր մասնակիցները հավասար են· Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ :Աշխատանքի

մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը· Ոչ մի աշակերտ չի քննադատվում· Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին.· խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՔՆ Է

Արվեստի դասերը օգնում են աշակերտին զարգանալ համակողմանի՝ ոչ միայն հոգով այլ նաև մտքով: Արվեստի տարբեր ոլորտներին առնչվող ռարկաները նպաստում են, որ աշակերտի մոտ զարգանա գեղեցիկը տեսնելու , լսելու և ճանաչելու կարողությունը :Առանց գիտական լուրջ գիտելիքների անհնար է տիրապետել նկարչությանը:Կարևոր է, որ աշակերտը ոչ թե մեխանիկորեն տիրապետի նկարչական հմտություններին, այլև ուսումնասիրի տեսությունը: Իհարկե դպրոցում աշակերտը ծանոթանում է և գիտելիքների որոշակի բազա է ձեռք բերում , բայց անհրաժեշտ է , որ աշակերտը հետաքրքրություն ցուցաբերի և իր գիտելիքների պաշարը ավելացնելու և ամրապնդելու համար ուսումնասիրի գրքերը և լրացուցիչ այլ աղբյուրներ: ՈՒսումնասիրելով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի միջնակարգ դպրոցներում նկարչության ուսուցման մեթոդները՝կտեսնենք ,որ կերպարվեստը դասավանդվում է չորս հիմնական ուղղությամբ՝

1. նկարել բնօրինակից
2. թեմատիկ նկարչություն
3. դեկորատիվ նկարչություն
4. զրույց արվեստի մասին

Մեր օրերում ծնողները և աշակերտները սիրում և գնահատում են ոչ միայն բնագիտական առարկաները ,այլ նաև հասկանում, զգում և կարևորում են երեխայի նախասիրությունները և կարողությունները, որի արդյունքում երեխաները հաճախում են արվեստի դպրոց և տարբեր խմբակներ: Չափազանցած չեմ լինի ,եթե ասեմ ,որ մեր ազգի մեջ շատ են նկարչական

բարձր կարողություններ ունեցող մարդիկ: Այդ տաղանդը պետք է ամրապնդել ,զարգացնել և հարստացնել համապատասխան գիտելիքներով :Անգամ մեծահասկներն են հաճույքով սովորում ճիշտ նկարել,բավարարելով իրենց ներքին պահանջմունքները: Դպրոցում տարբեր առարկաներից աշակերտները ծանոթանում են տարբեր դարաշրջանների մշակույթի և արվեստի պատմությանը:Առարկաները որքան էլ տարբեր լինեն, միևնույն է ինչ-որ կետում փոխկապակցվում են միմյանց հետ և միջառարկայական կապ է ստեղծվում բոլոր առարկաների միջև:Որքան էլ առաջին հայացքից անհավանական թվա ,սակայն կերպարվեստը սերտ կապ ունի գծագրության, կենսաբանության,ֆիզիկայի, բուսաբանության, աշխարհագրության, պատմության, մաթեմատիկայի, երաժշտության ,հայոց լեզվի հետ: Այժմ, նկարչական ուսուցման տեխնիկան և նյութերը շատ բազմազան են: Մենք ապրում ենք տեղեկատվական տեխնելոգիաների ժամանակաշրջանում, որտեղ սարքավորումները կարողանում են կատարել բազմաթիվ գործողություններ , անգամ մտածել, հիշել: Սակայն մետաղը հույզեր , զգացմունքներ և տրամադրություն արտահայտելու կարողություն չունի և ոչ էլ գործարանում արտադրված բազմահազար իրերը կարող են այնպիսի տպավորությոին գործել, ինչպես արվեստի մեկ ստեղծագործություն:Արվեստագետի ստեղծագործությունը անգնահատելի աշխատանք է: Ավաղ, քիչ չեն դեպքերը, երբ անգամ հայտնի նկարիչները, որոնք իրենց կյանքի ընթացքում ստեղծելով մնայուն և անգնահատելի գործեր,բայց տվյալ ժամանակաշրջանի փիլիսոփայոիթյան և գաղափարախոսության պատճառոց չեն արժևորվել: Հաճախ այդ նկարիչները ապրել և մահացել են աղքատության և թշվառության մեջ, բայց ժամանակը ամեն ինչ վերարժևորում է և ոսկին շողարձակում է փոշու հաստ շերտի տակից: Երբեմնի մերժված հանճարը գնահատվում է, մեծարվում ու նոր սերունդները դաստիարակվում են նրա դրած հիմքի վրա: Այսօր կերպարվեստը առանձին ինքնուրունն առարկա է և դասավանդվում է ոչ միայն հանրակրթական դպրոցներում այլ նաև արվեստի

դպրոցներում:ՈՒսուցիչները շարունակ մտածում են թե ինչպես կատարելագործեն մեթոդաբանությունը, որպեսզի աշակերտների մոտ հեշտացնեն նյութի յուրացման գործընթացը: Իսկ մեր օրերում շատերն են ստեղծում իրենց տեխնիկան,մշակում ուսուցողական ծրագրեր կերպարվեստի ոլորտում: Թերևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին առաջ եկան արվեստի վիզուալ ուղղություններ ,որոնք թերահավատորեն մոտեցան ակադեմիական արվեստին և սկսեցին քննադատել:

Բազմաթիվ են նկարչական ուղղությունները, որոնք առաջացել են տարբեր դարաշրջանների մարտահրավերներով: Կարճ ժամանակահատվածում Արևմուտքում ի հայտ եկան գեղարվեստական տարբեր ուղղություններ՝ իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ, նեոիմպրեսիոնիզմ, էքսպեսիոնիզմ սյուրեալիզմ ,կուբիզմ, դադաիզմ և շատ ուրիշ ուղղություններ:Այս բազմազան ուղղությունները շփոթություն մտցրեցին կերպարվեստի դասավանդման մեթոդաբանության մեջ: Ժամանակակից և իզմ-երով ոգեշնչված նկարիչները դեմ էին ակադեմիական նկարչությանը:Բայց անհրաժեշտ է ,որ աշակերտը ծանոթ լինի ինչպես ակադեմիական ,այնպես էլ ազատասեր նկարչական ոճերին: Հեռագայում աշակերտը ինքը կնտրի թե որ ուղղությունն է իր համար ավելի հոգեհարազատ, գուցե ստեղծի իր ինքնուրույն ոճը: Արվեստում նորը ստեղծելիս չպետք է մոռանալ հնի մասին:Ծանոթացնելով աշակերտներին արվեստի կարևոր դարաշրջաններին և հայտնի նկարիչների կյանքին և ստեղծագործություններին, մենք կավելացնենք աշակերտների գիտելիքները , նրանք կսկսեն տարբերել արվեստը չարվեստից և հնարավոր է առաջացնենք ստեղծագործելու ցանկություն: Դաստիարակության և ուսուցման հաջողությունը մեծապես կախված է ուսուցչի դասավանդման մեթոդների և տեխնիկայի կիրառումից, ուսուցանվող նյութի բովանդակությունը հետաքրքիր և մատչելի հաղորդելու ձևից է կախված ,թե աշակերտը ինչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք կբերի: Կերպարվեստի դասավանդման ժամանակ առաջնային նշանակություն ունի թղթի դիրքի

ընտրությունը, առարկաները թղթի վրա ճիշտ կառուցելը, լուսաստվերի միջոցով առարկային ծավալ հաղորդելը: Այս ամենը աշակերտը պետք է սովորի աստիճանաբար: Կերպարվեստի դասերին շեշտը դրվում է գույնի վերլուծության, նրանից առաջացած հույզերի արտացոլման վրա: Մասնավորապես աշակերտների համար խրթին թեմա է լուսաստվերային անցումը: Երկար ժամանակ մտածում էի թե ինչպես բացատրական-ցուցադրական մեթոդին զուգահեռ, ինչ մեթոդներ օգտագործեմ, որ աշակերտների մոտ այդ հերթականությունը ամրապնդվի:Կարծում եմ երկու կամ երեք մեթոդի կիրառումը մեկ դասաժամին բավական է,որովհետև ինտերակտիվ մեթոդները բավականին ժամանակ են խլում, դրան զուգահեռ չպետք է հրաժարվել խոսքային և զննական մեթոդներից:

Խթանման փուլում դասը սկսում ենք ,,Գուշակությամբ,,:Թղթերի վրա գրում եմ օրվա թեմային համապատասխան բառեր և բաժանում աշակերտներին: Նրանք բարձրաձայն կկարդան և ամբողջ դասարանը կկռահի թե ինչ թեմայի շուրջ է լինելու դասը, թղթերը կամայական եղանակով փակցնում ենք գրատախտակին: Ցուցադրելով կլոր և գլանաձև առարկաներ ,բացատրել լույսի աղբյուրի և նրա լուսավորության հետևանքով, առարկայի որ մասն է լուսավորվում,որը մնում է ստվերի մեջ: Իմաստի ընկալման փուլում աշակերտները արդեն ձեռք բերված գիտելիքների հիման վրա, կիրառելով ,,Գտիր ճիշտ հերթականությունը,, մեթոդով աշակերտները հերթականությամբ դասավորում են թղթերը գրատախտակին:Ամրապնդման և հմտանալու համար կառաջարկեմ ,,Պոպկոռն,, տարբերակով մի քանի անգամ կրկնել լուսաստվերը ըստ հերթականության և նկարել:Վերջում աշխատանքները քննարկվում են և գնահատվում: Օգտագործելով այս մեթոդը կարծում եմ կստանամ ցանկալի արդյունքը:

Եվս մեկ խրթին թեմա ՝ կերպարվեստի ժանրերը: Աշակերտները դժվարությամբ են հիշում բոլոր ժանրերը: «Սատանայի վկա» մեթոդով

աշակերտների ուշադրությունը գրավել հետևյալ նախադասությամբ.

-Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթը» հիանալի նատյուրմորտ է:

Քանի որ աշակերտները լավ ծանոթ են թե քանդակին և թե նատյուրմորտ ժանրին, անմիջապես կնկատեն սխալը: Այսպիսով բոլորը կներգրավվեն դասի մեջ և կուղղեն նախադասությունը, որ Սասունցի Դավիթը ոչ թե նատյուրմորտ է այլ քանդակ:Որոշակի տեղեկություն տալ ժանրերի մասին: Այնուհետև աշակերտները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր թիմին տրվում է մեկ ժանրի մասին տեղեկություն և բնութագրիչներ:Աշակերտները մինչ կսովորեն և կքննարկեն նյութը ,գրատախտակին փակցնել յուրաքանչյուր ժանրը ներկայացնող նկարի վերատպություն: Յուրաքանչյուր խումբը պատմում է իր թեման և ,,Ցուցահանդեսում գտնելով իր ժանրը, կանգնում է նրա կողքին: Այսպես ներկայացնում են բոլոր խմբերը և պատմում իրենց հասանելիք նյութը: Բոլորը, լսում են մեկը մյուսին: Քանի որ իրենք սովորեցին ,ներկայացրեցին և գտան ճիշտ պատասխանը , կարծում եմ այդ ինֆորմացիան երկար կմնա նրանց հիշողության մեջ: Վերլուծելու համար օգտագործել «Վենի դիագամը» : Համեմատել լավ չընկալված ժանրերը և գտնել դրանց ընդհանրությունները և տարբերությունները: Այնուհետև առաջարկել նկարել այն ժանրով, որը իրենց ավելի հոգեհարազատ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման մեթոդների հետազոտությունը հանգեցրեց այն եզրակացության, որ ուսուցումը պետք է կազմակերպվի և ՛ավանդական և՛ ինտերակտիվ եղանակով, որովհետև ինտերակտիվ եղանակը զարգացնում է սովորողի մտածողությունը , վերլուծական միտքը, առաջացնում է հետաքրքրություններ, բայց այս մեթոդը բավականին ժամանակ է խլում, և անհրաժեշտ է , որ ինտերակտիվ մեթոդին զուգահեռ ուսուցումը կազմակերպվի նաև ավանդական եղանակով՝ պատմելով

բացատրելով և դիդակտիկ նյութերի օգտագործմամբ: Այս մեթոդով կարճ ժամանակում շատ ինֆորմացիա ես հաղորդում և լռության մեջ նյութը հեշտ է յուրացվում: Պասիվ մեթոդի ժամանակ աշակերտը լսում է, տեսնում և զգում: Ինտերակտիվ մեթոդի ժամանակ աշակերտը կիրառում է իր ունեցած գիտելիքները ,ձեռք բերելով նոր հմտություններ և կարողություններ:

Ինչ վերաբերվում է ոճերին, ապա ակադեմիական կրթությունը հիմնարար սյուն է կրթության պրոցեսում,առանց ակադեմիզմի գրագետ ազատականություն չի ստեղծվի,սակայն պետք չէ տեղավորվել շրջանակի մեջ:Ազատական նկարչությունը թռիչքի, ազատ ստեղծագործելու ,նորարարություն արարելու հնարավորություն է տալիս:

Օգտագործված գրականություն

Ա. Յ. Ալեխին, «Ընդհանուր ուսուցման մեթոդները»:Կ 1983թ

Վ. Վ. Դավիդով, «ՈՒսուցման զարգացման տեսություն»Մ:Ինտոր1996թ

Ա. Ա. Բալև «Ակտիվ ուսուցման մեթոդները»:Մ:2006թ

Ա. Մ. Սմոլկին «Ակտիվ մեթոդների ուսուցում»:Մ: 1991թ

Մ. Մ. Անցիբոր «Դասավանդման ակտիվ ձևերն ու մեթոդները» Տուլա 2002